

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. ՆԵՐՀՈՒՆ ՀԱՅԱԳԵՏԸ ԻՐ ՄՆԱՅՈՒՆ ՎԱՍՏԱԿՈՎ

(ծննդյան 90-ամյակի առթիվ)



ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանն այսօր իննսուն տարեկան է, ծանրաբեռն՝ իր գիտական վաստակով, բազում գրքերով ու հրապարակումներով, իր հասցրած ուսանողների ու գիտաշխատողների պատկառելի շարքով, որ դեռ համալրվելու է ուսուցչի նորանոր սաներով՝ վկայելու համար, որ ճշմարիտ քաղաքացու և գիտ-

նականի կենսագրությունը սկիզբ ունի, իսկ գործունեությունն ու ստեղծագործությունը հարատևում են իրենց շարունակելիության մեջ:

Ս. Հարությունյանը ծնվել է 1928 թ. սեպտեմբերի 22-ին, Ղուկասյանի (Աշոցք) շրջանի Ղազանչի գյուղում: Միջնակարգն ավարտել է Թբիլիսիում և 1947 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ՝ մասնագիտական կրթություն ստանալով արևելյան լեզուների և գրականության բաժնում: Իր դիպլոմային ավարտական աշխատանքը՝ «Պարսկերենի տարրերը Սայաթ-Նովայի հայերեն խաղերում» խորագրով (1952) ցուցադրում էր հեղինակի հղկված մտածելակերպն ու հայագիտական-արևելագիտական նախասիրությունները: Այդ նախասիրություններն էլ նրան տարան հետագա ուսումնառության, երբ 1956 թ. ընդունվեց ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի ասպիրանտուրա, որը նա ավարտեց և պաշտպանեց ատենախոսություն՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» թեմայով: Եվ վերստին, մասնագիտական կոչմանն ընդառաջ՝ 1960 թ. Ս. Հարությունյանն աշխատանքի անցավ նույն համակարգի Հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ իր անփոփոխ աշխատավայրը՝ այդ ժամանակից ի վեր: Այստեղ էլ պաշտպանեց իր դոկտորական ատենախոսությունը՝ «Մանուկ Աբեղյան. կյանքը և գործը» թեմայով (1971): Այդուհետ, հայ բանասիրության այդ դասականը Ս. Հարությունյանի համար պետք է

Սարգիս Հարությունյան. Ներհուն հայագետը՝ իր մնայուն վաստակով

մնար մշտական ակնածանքի առարկա և ուղեկից՝ իր գիտական մտահղացումներն իրականացնելու ճանապարհին: Անգամ գիտակազմակերպչական աշխատանքի այն ժամանակաշրջանում, երբ զբաղեցնում էր նույն ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալի պաշտոնը, նա իր արդյունավետ եռանդն ի սպաս է դրել այդ հաստատության գիտական ներուժի լիարժեք դրսևորմանը:

Ս. Հարությունյանի գործունեությունն ունի զարմանալիորեն լայն ընդգրկումներ: Նրա բանահյուսական ուսումնասիրությունների մեջ, եթե չհաշվենք գիտական աստիճանների հաղթահարմանը նվիրված գործերը, ժամանակային իմաստով առաջնությունը պատկանում է ժողովրդական ստեղծագործությանն ու դրա դրսևորման ձևերին՝ ժանրերին նվիրված գործերին: «Հայ ժողովրդական հանելուկներ» աշխատությունը (1960) և հանելուկների համահավաք բնագրերի հրապարակումը (1965) գիտնականի ուսումնասիրած և մեզանում մինչ այդ քիչ շոշափված հիմնահարցերի աննախընթաց լուսաբանումներն էին: Այստեղ Ս. Հարությունյանն ասում է իր ծանրակշիռ խոսքը՝ ի հայտ բերելով այդ ժանրի շատ ուշագրավ առանձնահատկություններ՝ հայ բանահյուսական գեղարվեստական, միաժամանակ և իրապատում մտածողության մեջ: Սրանց հետ բազմաթիվ հյուսվածքներով կապված՝ բանահյուսական աշխարհընկալման այնպիսի ժանրեր, ինչպիսիք են անեծքը և օրհնանքը, հմայական և ժողովրդական աղոթքները, խորագնին վերլուծվում և բնութագրվում են Ս. Հարությունյանի «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» (1975), «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» (2006) աշխատություններում: Խնդրո առարկա հիմնահարցերը ներքնապես կապված են միմյանց, սակայն իբրև բանահյուսական տարբեր արգասիքներ, ունեն իրենց առանձնահատկություններն ու ինքնատիպ բնույթը, որոնց վերհանումը Ս. Հարությունյանն իրականացնում է տաղանդավոր հետազոտողին հատուկ աննկատելի և դյուրին անցումներով, երբ հիմնահարցի լուսաբանումը հույժ գիտական մնալով՝ ընթերցողին ներշնչում է նաև ստեղծագործական հմայք՝ նախապատրաստելով մյուս հիմնահարցի հայտնությունը: Այս իմաստով փոխլրացնող և փոխհարստացնող բնույթ ունեն նրա «Հայ առասպելաբանություն» (2000) և «Հին հայոց հավատալիքները. պաշտամունքը, կրոնն ու դիցարանը» (2001) մենագրությունները, ինչպես նաև ռուսական երկհատոր հանրագիտարանում («Мифы народов мира» (М., 1981–1982, переизд. 1990 и 2000 гг.) տպագրված նրա ամբողջական հոդվածաշարը՝ «Հայկական առասպելաբանություն» վերնագրով: Ի դեպ, նշված հոդվածաշարը մի որոշ ժամա-

Սարգիս Հարությունյան. Ներհուն հայագետը՝ իր մնայուն վաստակով

նակ անց տպագրվեց գերմաներեն և հունգարերեն, ինչը վկայում է հայ գիտնականի՝ եվրոպական չափանիշներով հետազոտական աշխատանքի բարձր մակարդակի մասին:

Անտարակույս, Ս. Հարությունյանը մտնում է հայ դասական բանահյուսագետների կոհորտան, երբ նկատի ենք ունենում նրա նորովի և թարմ շեշտադրումներով հազեցած խոշոր վաստակը՝ հայ հերոսական էպոսի և վիպական մշակույթի հետագա ուսումնասիրության բնագավառում: 1971-1973 թթ. իր ղեկավարությամբ գործող գիտական արշավախումբը Հայաստանի ավելի քան 200 բնակավայրերում գրառել է էպոսի տասնյակ տարբերակներ, որոնք Ս. Հարությունյանը Ա. Սահակյանի գործակցությամբ հրատարակել է «Սասնա ծռեր» բազմահատորյակի Գ և Դ հատորներում (1979 և 1999 թթ.): Հայ վիպական բանահյուսության ուսումնասիրության բնագավառում Ս. Հարությունյանի ներդրած ավանդը դուրս է գալիս զուտ հայագիտական սահմաններից և ներթափանցում արևելագիտության ոլորտ, երբ հայ բանահյուսական արժեքները գնահատվում են պարսիկների ու քրդերի ժողովրդական ստեղծագործության համադրումներով՝ ընդհանրություններ հայտնաբերելով երկուստեք անթեղված բանահյուսական ծայրերում:

Ժողովրդական վեպի ստեղծմանն ու ձևավորմանը Ս. Հարությունյանը մոտենում է պատմաբանասիրական լայն հայեցակետով, դրա լինելության առանձնահատկությունների երկայնամիտ դիտարկումներով: Այսպիսի ընդգրկումներով են նրա կողմից կազմվել և խմբագրվել էպոսի համահավաք բնագրերը և դրանք նախապատրաստող տարբերակները (1977):

Հոբելյարի գիտական արգասիքի առանձին մաս են կազմում ազգային բանագիտության մեծերին և նրանց ուսումնասիրություններին նվիրված գործերը: Նրա մի շարք աշխատություններում արժանին են հատուցվում և նոր կողմերով գնահատվում Գարեգին Սրվանձտյանցի, Մանուկ Աբեղյանի, Գարեգին Լևոնյանի, Գարեգին Հովսեփյանի, Ստեփան Մալխասյանցի, Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Արամ Ղանալանյանի ներդրումները հայ էպոսագիտության և բանագիտության անդաստանում: Այս շարքում հարկ է առանձնացնել Ս. Հարությունյանի «Մանուկ Աբեղյան» շատ տպավորիչ մենագրությունը (1970), որն ըստ էության հանրագումարի է բերում այդ խոշոր ուսումնասիրողի վաստակը հայագիտության մեջ: Դրան է առնչվում Ս. Հարությունյանի «Հայագիտության զարգացումը 1870–1917 թթ.» գործը, որտեղ ներկայացվում են հայագիտության արդիական պատկերն ու դրանք հատկանշող գործոնները՝ ընդհուպ մինչև այդ զարգացումը պայմանավորող ժամանակային

Սարգիս Հարությունյան. Ներհուն հայագետը՝ իր մնայուն վաստակով

առանձնահատկությունները: Ավելացնենք, որ այս հոլովոյթի մեջ ինքն էլ՝ հարգարժան հոբելյարը, լինելով այս մարզի բանիբուն հետազոտողը, տասնամյակներ իր տքնաջան ու բարձրակարգ աշխատանքներով հայտնի մեզանում՝ իրավացիորեն ճանաչված է որպես հայ դասական էպոսագիտության արժանավոր շարունակողն ու արդի ներկայացուցիչը:

Անվանի հայագետն իր ավյունը չի ամփոփում զուտ գիտահետազոտական աշխատանքների շրջագծում: 1970-ական թթ. և հետագայում նա գիտահանրամատչելի բնույթի բազմաթիվ միջոցառումներ է կազմակերպել և վարել, որոնցից կարելի է հիշել հայկական հեռուստատեսության հանրաճանաչ «Հայագիտական հանդես» հաղորդաշարը, հրատարակության է պատրաստել հայ հին վիպական ստեղծագործությունների վերաբերյալ գրքեր և հրապարակումներ:

Ս. Հարությունյանի մշակած գիտական ընդարձակ տարածքի մի մասն են կազմում հայ-իրանական մշակութային և գրական աղերսները, որոնք արևելագիտության տիրույթներն են տանում հեղինակին և նրան ապավինող ընթերցողին, և որոնք գիտնական-արևելագետը հատկապես լուսաբանել է տարիներ առաջ հրատարակված «Իրան նամե» հանդեսում:

Գիտական ակնառու վաստակի համար Ս. Հարությունյանն արժանացել է հայրենական և արտերկրի հեղինակավոր մի շարք կոչումների և մրցանակների, նրա աշխատությունները թարգմանվել են տարբեր լեզուներով՝ ընդլայնելով միջազգային պատկերացումները հայ արդի բանագիտության վերաբերյալ:

Ս. Հարությունյանը երկար տարիներ դասավանդել է Երևանի պետական համալսարանում և հանրապետության այլ բուհերում, պատրաստել գիտամանկավարժական կադրեր՝ նրանց փոխանցելով իր իմացությունը, մանկավարժական փորձն ու հմտությունները: Նրա իմացականությունն ու գիտության ընթացիկ շարժման նուրբ զգացողությունն արտահայտվեցին իր խմբագրած ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսում» (2006–2018):

Այն ամենը, ինչ ասվեց վերը, դեռևս քիչ են Ս. Հարությունյան մարդուն, քաղաքացուն, այս մշտական աշխատավորին բնութագրելու համար, մանավանդ, երբ աչքի առջև է նրա բացառիկ անկեղծությունը, մարդկանց հետ շփվելու անմիջականությունն ու շիտակությունը: Հարգարժան գիտնականից սպասում ենք իր անսպառ մտահղացումների իրականացում և նորանոր գործեր՝ արևշատության ակնկալիքներով:

**«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ,
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**